Կարծիք ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հայցորդ Ալեքսանդր Գեղամի Խաչատրյանի կողմից գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ույգուրական գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության ոլորտում (20-րդ դարի 2-րդ կես – 2010-ական թվականների)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հայցորդի կողմից կատարվել են մեծածավալ և հետաքրքիր ուսումնասիրություններ: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ) համաշխարհային քաղաքականության կարևորագույն և հզորագույն սուբյեկտներից է, որը շոշափելի ազդեցություն ունի տարբեր տարածաշրջաններում:

Չինագիտության զարգացումը պահանջված և արդիական է նաև Հայաստանի համար, և անհրաժեշտ է այն դարձնել մեր գիտավերլուծական կարևորագույն ուղղություններից մեկը:

Չինաստանի համար ույգուրական հարցն ունի յուրահատուկ նշանակություն: Այն առնչվում է ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական բազմաթիվ խնդիրների հետ՝ հանդիսանալով նաև չինական պետականության առջև ծառացած կենսական մարտահրավերներից մեկը: Այդ խնդիրը նաև կարևոր է հայոց քաղաքական մտքի ու արտաքին քաղաքականության համար և ճիշտ օգտագործման դեպքում կդառնա հայ-չինական հարաբերությունների սերտացման առանցքային բաղադրիչ:

Ալեքսանդր Խաչատրյանի ուսումնասիրությունների մեջ այս թեմաների վերաբերյալ կա համապատասխան և բովանդակալից վերլուծություն, առաջարկներ և կանխատեսումներ: Հայցորդն ուսումնասիրել է հարցը քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական հարթություններում, հանգել ճիշտ հետևությունների:

Աշխատության կառուցվածքը, հետազոտությունների ձևն ու ոճը, ինչպես նաև թեմային առնչվող ուսումնասիրությունները ներկայացված են պատշաճ ձևով: Աշխատությունում դիտարկվում է ույգուրներին զսպելու Չինաստանի քաղաքականությունը, կատարվում է ճիշտ հետևություն, որ այն ուղղված չէ ույգուր ժողովրդի դեմ, այլ հանդիսանում է պայքար անջատողականության և ծայրահեղականության դեմ:

Հեղինակը Սինձյան-Ույգուրական ինքնավար շրջանում անջատողականության զսպմանն ուղղված Չինաստանի քաղաքականությունը դիտարկում է սոցիալ-

տնտեսական, ժողովրդագրական հարթություններում՝ դրսևորելով օբյեկտիվ մոտեցում:

Հետազոտությունում, սակայն, բացակայում է վարչական աշխարհաքաղաքականության բաղադրամասը, որի էությունը կայանում է նրանում, որ անջատողականության և ծայրահեղականության զսպման նպատակով Սինձյան-Ույգուրական ինքնավար շրջանն իր հերթին բաժանված է ազգային այլ (ղազախական, ղրղզական, մոնղոլական, տաջիկական և այլ) ինքնավար ենթաշրջանների, գավառների և նույնիսկ համայնքների: Այս քաղաքականությունը կարելի է փոխաբերական իմաստով նմանեցնել ռուսական «մատրյոշկային»:

Հայցորդի հետ այդ հարցը մանրամասն քննարկելուց հետո նա համաձայնել է ներկայացված փաստարկների հետ:

Ընդհանուր առմամբ, աշխատանքը համապատասխանում է բոլոր անհրաժեշտ չափանիշներին, և հայցորդն արժանի է Է.0002 «Համաշխարհային պատմություն» մասնագիտության պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պատմական գիտությունների դոկտոր

Դավիթ Բաբայան

20.V.2021 թ: